ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Բաժնորդագինը որոշել թողուած է բաժնորդի կամքին։
Ամերիկայի համար կընդունուի ամսական սկիզբէն 20 սէնթ
Պարսկաստանի » » » » 40 կոպէկ
Եւրոպայի և այլ տեղերի համար » » » 1 ֆրանգ
Հատով կը ծախուի ամեն տեղ 10 սանթիմ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։
Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Դ ՏԱՐԻ ԹԻԻ 42

1889 ՓԵՏՐՎԱՐ 27
ՓԵՏՐՎԱՐ 15 (Հ. Տ.)

ԶՈՐՆԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը հրատարակուի Դ. և Շբթ. օրեր

ԳԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։
Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրներն։
Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանթիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանթիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Rue Vacon, 50)

NEUBAU DASSE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամենաբարերար Սուլթանը եւ ամենախոնեմ Պատրիարքը.—Մեր պարտքը.—Մեր բարեկամներին.—Մկրտիչ Թիւրիւնճիկ.—Հայեր ի Թիւրքիա.—Ակնարկներ.—Տեղական.—Ֆրանսական լուրեր.—Արտասահմանի լուրեր.—Յանուցումներ։

ԱՄԵՆԱԲԱՐԵՐԱՐ ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ԱՄԵՆԱԽՈՀԵՄ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Նախորդ թուով հրատարակեցինք Աչըգեան Պատրիարքի մէկ շրջաբերական նամակը որ Եւրոպայի մի քանի տէրերն հայ գաղթականութիւնների հովիւներին ղրկած էր, հակիրճ կերպով հրատարակութիւններն խափանել տալու համար։

Այդ շրջաբերականի մէջ Աչըգեան Պատրիարքը Եւրոպացնակ Հայերի չարժումներն ազդալուսա և անխոհեմ անուանելով, ինք ամենայն խոհեմութեամբ պաշտօնապէս կը յայտարարէ Հայ ազգին անունով թէ «Ամենաբարեգութ Սուլթանն իբրեւ արեգակն հաւասար ջերմութեամբ եւ հաւասար լուսով կը ջեռուցանէ եւ կը լուսաւորէ իւր հպատակներն։»

Այս տողերը՝ մի հայ Պատրիարքի գրչին տակ որ թիւրքերի ձեռքին մէջ նահատակուած մի ազգի ձայնը ներկայացնելու պաշտօնն առած է իր վրայ, որչա՛փ ղղուանք և զայրոյթ կը պատճառեն անշուշտ ամեն մի Հայի սրտին եթէ միայն նա սիրտ ունենայ։

Աչըգեան Պատրիարքը իւր այդ տողերով խոհեմութիւն կը համարի ուրանալ թէ հարատահարութիւն կայ Հայաստանի մէջ և կըսէ թէ արեգակնափայլ Սուլթանի ճառագայթները հաւասարապէս կը տարածուին թէ՛ Հային և թէ՛ Թիւրքին վրայ (ինչպէս որ Աստուած իւր արեգակ հաւասարապէս կը ծագէ թէ՛ արդարներին և թէ՛ մեղաւորներին վրայ)։

Բայց մինչ՝ Աչըգեան Պատրիարքը իւր այդ տողերով ղինք խայտառակած չկինի՝ աշխարհի առջեւ երբ նոյն իսկ Արեգակնանման Սուլթանը իւր ստորագրութեան տակ, և իրեն հետ միասին եւրոպական 6 մեծ տէրութիւնների ներկայացուցիչներն ալ ստորագրելով, հաստատած է Պերլինի դաշնագրի 61րդ յօդուածովը թէ Հայերը կը հարատահարուին Հայաստանի մէջ և թէ անհրաժեշտ պէտք կայ բարեքաւումներ մտցունելու այդ երկրի կառավարութեան մէջ, եւրոպացնակ պետութիւններուն հետ խորհրդակցութեամբ. իսկ հայ ազգին Պատրիարքը, Աչըգեան արքեպիսկոպոս, որ հայ ազգին յաւերն դարմանելու համար անցած է հայ ազգի գլուխն, որ հայ ազգին ստակովն կապրի, որ հայ ազգէն 10,000 ղրուշ ամսական կըստանայ միմիայն անոր համար որ աշխատի հայ ազգի իրաւունքներն պաշտպանել և հարատահարուողներին օգնութեան հասնիլ, այդ Պատրիարք այն աստիճան կատղնանայ կը ցած նայ որ կուզէ աշխարհ խաբել, յայտարարելով թէ Սուլթանի ճառագայթներն չնորհովն կատարեալ հաւասարութիւն կը տիրէ Հայաստանի մէջ և թէ ստա են Հայերի հարստահարուելուն նկատմամբ հրատարակուածներն։

Իրաւ է թէ Աչըգեան եպիսկոպոսն ինք անձնապէս հանգիստ կեանք վարած է Արմաշի վանքին մէջ և կը վարէ այժմ Պատրիարքարանի մէջ. բայց իւր ժողովուրդ Հայաստանի մէջ իրեն պէս հանգիստ և ապահով կեանք ունի՞ միթէ։ Թերեւս Սուլթանին նուէրը ղրկած 1000 ոսկիներն ճառագայթներն լաւ չեռուցած լինեն Աչըգեան եպիսկոպոսը Պատրիարքարանին մէջ. բայց այդ 1000 ոսկիներ տոկոսն անգամ չեն ներկայացուներ այն գումարներուն որ ամենաբարեգութ Սուլթանի կառավարութիւնը տարիներէ ի վեր հաւաքած է և կը հաւաքէ դեռ Հայաստանի ժողովրդէն երեսուդէմի պարագի անունովն և որուն փոխանակ հայ գաղթին յանձնելու իւր կոկորդ անցունելով կաշխատի մարսելու։

(Շարունակելի)

Մ. Փ.

ՄԵՐ ՊԱՐՏՔԸ

Հայրենասէրնե՛ր, Հայաստանի վիճակ երթալով կը ծանրանայ. մեր բռնաւոր իւր չանքերն կը կրկնապատկէ խեղդելու, չլսաելու և մեռցնելու մեր հայրենասիրական գործերն էւ ղժացուցիչներն. օրից օր մի նոր միջոց, մի նոր ղէնք կը հնարէ իսպառ արմատախիլ անելու մեր մէջէն հայ-հայրենիքի գաղափարն։ Աւելի ևս զօրացաւ մեր թշնամին, զի մեր անտառ կորսելով հատցնող տապարին կոթը այժմ մեզանից կը շինէ —Հայ ազգի ազատներ ու մեծատուներըը—Հայերիս ներքին կրծող որդերն—և մինչեւ իսկ մեր գլուխ և պաշտպան Պատրիարքն իւր Պատրիարքարանով ու ժողովներով ոտք ու ձեռք կը լինեն մեր թշնամուն։

Սակայն, մեք ուխտեալ հայրենասէրներս, վրկութեան գործին ղինուորներս, չենք յուսահատուր, չենք ընկճիր և չենք լքանիր մեզ դէմ ուղղուած հարուածոց առջեւ. թուլութեան ժամն չէ. ցոյց տա՛նք թէ մեք կուզենք կռուել մեր և մեր հայրենիքի պատութեանը սպառնադողներին դէմ։

Ֆալալերուի՛նք մեր սուրը գործին աշխատելու. արդարութիւն և իրաւունք մեր կողմն է, հաստատ հաւատքով կռուի՛նք իրաւունքի բըռնաբարին և անարդարութեան դէմ, կռուինք վերջ տալու համար Հայաստանի մեր խեղճ եղբարց ցաւոց ու տառապանաց։

Մեր թշնամին թէև զօրաւոր, այլ մի փտուած բռնաւորութիւն՝ անիրաւ և անխելք ճիգեր կընէ դեռ ևս ապրելու. նա մեռնելու որոշուած է և գերեզմանէ կը փախչի. ժամանակ և քաղաքակրթութիւն այս վճռած են ոգեղ բռնաւորներին համար։

Իսկ մեք նոր ծնած յուսով և եռանդով պիտի կռուինք մեր իրաւունքի և մեր ազատութեան համար։ Մեր սուրբ նպատակի ուխտեալ և հաստատամիտ զոհերս յառա՛ջ տանիմք մեր գործ և պիտի տեսնեմք որ մեր թշնամին պիտի լինայ հայ ժողովրդեան տուն յարատեւ չանքերի առջեւ. մե՛ք պիտի լինի յաղթութիւնը։ Զը խաբուինք մեք կեղծ բարեկամներէ անխելք մտայ արատագրութիւնից, և նմանապէս ամէն անոնց որք կուզեն զմեզ քնացնել պատիր խոստումներով, զմեզ իրենց ապագայ չահերին որս անելու համար։

Ուրեմն ամեն Հայի, ամեն Հայկի արիւն ունեցողի պարտքն է գործել, և գործել մինչեւ վերջին չունչ. ճիշդ այս օրէս, ճիշդ այս վայրկենէս առանց ժամ մը անցունելու պի սուրբ է դա և որչափ որ անցնի այնքան պիտի պժուարանայ գործը. այո՛, այժմէն իսկ կեանք տանք մեր ընկերութիւններին, մեր բարի ձեռնարկներն որք զմեզ առանց մոլորեցնելու ուղիղ դէպի մեր սուրբ նպատակն կառաջնորդեն։

Օ՛ն ուրեմն։

Վ. ԱՍՊՈՒՐԻՍ

Մեր Բարեկամների

Կը խնդրենք եւրոպացնակ մեր բարեկամներէ որ հաճին մանրամասն և ստոյգ տեղեկութիւններ հաղորդել խմբագրութեանս թէ ի՞նչ կանէ Արժ. Եղիշէ վարդապետ Դուրեան իւր այցելած քաղաքներուն մէջ։ Մեր ստացած ամեն տեղեկութիւններ չենք հրատարակեր մենք, բայց կը ցանկանք որ խմբագրութիւնը ծանօթացած լինի ամեն մանրամասնութիւններուն. ուստի կը խնդրենք մանրամասնօրէն գրել մեզ, կարելի եղածին չափ շուտ, և միանգամայն նկատել այն կէտերը որ մեր թղթակիցներ չեն ուզեր որ հրատարակուին այլ միայն խմբագրութեանս իմացունելու համար գրուած են։

ՄԿՐՏԻՉ ԹԻՒԹԻՒՆՃԻՃԻՖ

Մեր ընթերցողներն յայտնի է արդէն որ Պուլկարաբնակ Հայ հայրենասէրներէն Մեծ. Պր. Մկրտիչ Թիւթիւնճիճիֆ իւր գրած և Արմենիայի խմբագրութեան նուիրելով հրատա-

ԱՐՏԱՏՊԱՐԱԿ «Աղաւնոյ» ի Կ. Պոլիս

«ՆՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԱՒՎԱԾԱՀԱՅԵՐՈՑ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ» վերնագրեալ գիրքը տպագրուած է Ս. Էջմիածնի տպարանին մէջ 1874 թուականին. նոյն տպարանին մէջ 1888 թուականի ի 9429 թուոյ հրամանաւ տպագրուած է «ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԱՂԱՒՆԻ» ամսագիրը, որ կը հրատարակուի Կ. Պոլիս։

Ա.

Ամսոյ տուի ժամանակ ընթերցողաց աչքի առջեւ կ՚անցնի հայոց ազգային կեանքի մէջ տեղի ունեցած կարեւոր դէպքերու շարան մը, որոնք իրենց ազդեցութեամբ ամբողջ ազգի մը վրայ, ինչպէս նաեւ անոր ապագայ ընթացքին վրայ, մեծ ազդեցութիւն պիտի ունենան։ Ասոնք են՝ Ս. Էջմիածնի կաթողիկոսական աթոռին թափուր մնալը, Ս. Գրիգոր Լուսաւորչի ազգային հիւանդանոցին մէջ տեղի ունեցած ահաւոր դէպքերը, Ս. Գրիգոր Լուսաւորչի ազգային հիւանդանոցի կառավարութեան ընտրութիւնը, եւ վերջապէս Ս. Գրիգոր Լուսաւորչի ազգային հիւանդանոցի կառավարութեան ներկայացուցիչներու ընտրութիւնը։

Ս. Էջմիածնի աթոռին թափուր մնալուն պատճառը ամէնուն յայտնի է։ Ս. Գէորգ Կոստանդեան կաթողիկոսը, որ 1873 թուականին Ս. Էջմիածնի աթոռը բարձրացաւ, 1882 թուականին մահացաւ։ Անոր մահուան ատեն Ս. Էջմիածնի մէջ կային երեք եպիսկոպոսներ, որոնք կրնային կաթողիկոսական աթոռին բարձրանալ, այսինքն՝ Գէորգ եպիսկոպոս Տէր-Մովսիսեան, Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան եւ Խորէն եպիսկոպոս Մուրատեան։ Ասոնցմէ Գէորգ եպիսկոպոս Տէր-Մովսիսեան ընտրուեցաւ կաթողիկոս, եւ Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան ալ Ս. Էջմիածնի մէջ մնաց իբրեւ Ս. Աթոռոյ Տեղապահ։ Խորէն եպիսկոպոս Մուրատեան ալ Կ. Պոլսոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի ազգային հիւանդանոցին մէջ մնաց իբրեւ հոգեւոր հովիւ։

Ս. Գէորգ Կոստանդեան կաթողիկոսի մահուան ատեն Ս. Էջմիածնի մէջ կային նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի ազգային հիւանդանոցի հոգեւոր հովիւ Գրիգոր եպիսկոպոս Զօհրապեան եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի ազգային հիւանդանոցի տեսուչ Գրիգոր վարդապետ Զարդարեան։ Ասոնք ալ Կ. Պոլսոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի ազգային հիւանդանոցին մէջ մնացին իբրեւ հոգեւոր հովիւ եւ տեսուչ

լի է կարծել, որ այդ կարեւոր հարցն էլ լուծում կը ստանայ։ Ամենքին յայտնի է, որ այսօր մեր ամբողջ գրականութիւնը համարեա մամուլի մէջն է ամփոփուած։ Մամուլից դուրս մենք համարեա ոչինչ չունենք։ Պարբերական հրատարակութիւններից դուրս ամբողջ տարվայ ընթացքում լոյս չեն տեսնում գիտութեան կամ գեղարուեստի որ և է ճիւղին պատկանող յարդելի աշխատութիւններ։ Եւ այդ հասկանալի է, քանի որ մեր բոլոր գրողները իրանց աշխատութիւնները լոյս են ընծայում պարբերական հրատարակութիւնների միջոցով. այդ պարբերական հրատարակութիւնների մէջ են գործում այժմ մեր թէ հին և թէ նոր գրողները, և դրանից դուրս մեզանում համարեա մտաւոր կեանք չը կայ։ Այդ գուցէ ուրախալի չէ, բայց այդ այդպէս է...

Եւ այդ պատճառով, ես սկսել չը գործեցի, երբ մի փոքր վերեւ ասեցի, որ եթէ մեր մամուլի դրութիւնը մի փոքր բարեփոխվի, գրական աշխատանքի վարձատրութեան հարցը լուծում կը ստանայ։

Սակայն մեր պարբերական հրատարակութիւնները չեն կարողանում վարձատրել իրանց աշխատաւորներին։ Այս բոլոր սխալ ուղղութիւնից մենք չունենք մի լրագիր, կամ ամսագիր, որ կարողանար վարձատ իր բոլոր գրողներին, որ կարողանար նիւթապէս վարձատրել նրանց աշխատանքը։ Նոյն իսկ հայերիս մէջ ապահոված լրագիրը Մշակը հազիւ կարողանում է վարձատրել իր աշխատակիցներից մի քանիսին միայն,—և շատերը իրանց գրաւոր աշխատանքի համար վարձատրութիւն չեն ստանում և գրում են միայն իրանց բարի կամքով, և դէպի գործը կամ լրագիրը ունեցած սիրուց և համակրութիւնից։

Բայց ասեցէք խնդրեմ, ինչու մի լրագիր, որ գոյութիւն ունի ամբողջ 16 տարի, որ կարողացել է այսպէս թէ այնպէս այնքան մեծ ազդեցութիւն ունենալ, և որը իր մէջ է ամփոփած եղել հայոց համարեա բոլոր մտաւոր այժերի ստեղծագործութիւնները, չը պէտք է կարողանայ վարձատրել իր բոլոր աշխատակիցներին. և ինչու չը պէտք է կարողանայ վճարելով՝ ունենալ սեփական թղթակիցներ կարեւոր կենտրոններում, և ամեն տեսակ մասնագէտ աշխատակիցները, բժիշկները, անտեսագէտները, իրաւաբանները, մանկավարժներ եւայլն եւայլն, որոնք լրագրի համար աշխատէին և լրագրով էլ ապրէին...

Եւ կարծում է հասարակութիւնը թէ դրա համար միլիոններ են հարկաւոր ... Ոչ։—Եթէ Մշակը ունենայ 2000-ից մինչեւ 3000 բաժանորդ, ասում են միւս այդ լրագրի դրամական գործերի վեկավարները, այն ժամանակ կարելի կը լինի ոչ թէ միայն լրագիրը հրատարակել նոյն իսկ չափով 7 անգամ, այլ և կարելի կը լինի վարձատրել բոլոր գրողներին, վճարելով այն բոլոր աշխատութիւնների համար, որոնք լոյս են տեսնում լրագրի էջերում։ Եւ այդպիսով լրագիրը իր բիւդժէից 5-7 հազար րուբլի գրողներին փող տալով, կարող կը լինի գրողների մի խումբ ապահովել, և միջոց տալ նրանց իրանց ոյժը բացառապէս գրական մտաւոր աշխատութիւններին նուիրելու...

Կարծում եմ, որ այդպիսի մի հաշիւ ոչ ոք անիրագործելի չի համարի, որովհետեւ անիրագործելի դան չէ կարող համարվել այն, որ Մշակի նման լրագիրը կարող է և պէտք է ունենայ 2000-ից մինչեւ 3000 բաժանորդ բոլոր հայերի մէջ ...

Այդ կէտին հասնելու համար հարկաւոր է գլխաւորապէս իրան հայ հասարակութեան «դիտակցական» ցանկութիւնը, և եթէ հասարակութեան կողմից կարտայայտվի այդ տեսակ մի դիտակցական ցանկութիւն, այն ժամանակ, անկասկած, փոքր ինչ կը փոխվի հայոց մամուլի, հայոց լրագրութեան և օրագրութեան դրութիւնը, և դրանով էլ կը փոխվին գրականութեան մշակների նիւթական հանգամանքները և գրական աշխատանքի վարձատրութեան հարցը։

Դրա մասին ինքն հասարակութիւնն էլ պէտք է մտածի։

Դա օրվայ խնդիր է։

Լուծել այդ խնդիրը պէտք է ոչ թէ միայն գրական աշխատանքի վարձատրութեան սկզբունքի տեսակէտից, այլ նոյն իսկ ազգի պատւի և ժողովրդի զարգացման գործի օգտի տեսակէտից...

ՄԱԼԱՆ
(Մշակ)

ՏԵՂԱԿԱՆ

Վաղը, հինգշաբթի, երեկոյեան ժամ 9ին հայ մատուռին մէջ (Rue de l'Ormeau, 13) պիտի կատարուի Հայոց Ազգային Տօնը (Fête Nationale) Վարդանանց նահատակութեան 1438-րդ տարեդարձին առթիւ։ Ցուսով ենք որ այստեղ գտնուող ամեն Հայերը կը փութան ներկայ լինել այդ հանդիսին, պատուելու համար վարդանանց յիշատակը։

—Մի քանի օրէ ի վեր ցուրտերը դարձեալ սկսած են ատտիանալ Մարսէյլի մէջ. մինչեւ անդամ թեթեւ բուք սկսաւ գալ անցած շաբթու։ Փարիզէն եկած լուրերն կըմատնանեն թէ արտասահմանի մէջ այնչափ առատ ձիւն եկած է որ երկաթուղով հաղորդակցութիւնները դժարացած են։ Փարիզի մէջ ալ մեծ ցուրտեր և ձիւաններ պատճառեր է։ Հալիւրմասեայ ջերմաչափը երեկ առաւօտ Փարիզի մէջ ցոյց կուտար 5 աստիճան օձն վեր. իսկ Մարսէյլի մէջ 0 աստիճան կը ցուցներ առաւօտեան 7 ժամին, 10 աստիճան կէսօրին և 7½ աստիճան երեկոյեան 6 ժամին։

Ֆրանսական լուրեր

Լուր կը պարսի դարձեալ թէ կառավարութիւնը մտադիր է արտաքսել ղօրավար Պուլանժէն Ֆրանսական հողէն։ Կառավարութեան կուսակից թերթերն կը հերքեն այդ լուրը։

—Բանւորների մեծ ցոյցը որ տեղի պիտի ունենար անցած կիրակի օր Փարիզի և մի քանի գլխաւոր քաղաքների մէջ, յետաձգուեցաւ անորոշ ժամանակով։ Այսու ամենայնիւ մի քանի տեղեր, ինչպէս նաև Մարսէյլի մէջ, գործաւորներն առանց աղմուկի գիմումներ ըրին կառավարութեան, բայց գոհացուցիչ պատասխաններ չառնելով, գործաւորներն կը յայտարարեն այժմ որ այնպիսի միջոցներ ձեռք առնել պիտի պատրաստուին, որ իրենց իրաւունքները ոչ թէ խնդրել այլ պահանջել կարող լինին։

—Արձակուած ռուս կողակիների գլխաւորներէն Աչինոֆ իր հետ մի խումբ կողակիներ առնելով Ափրիկէ գնացած և Թաճուրա ծովեզերքն եղած էր որ Ֆրանսական իշխանութեան տակ կը գտնուի։ Տեղական կառավարութիւնը պահանջած էր Աչինոֆէն որ իր աւելորդ ղէնքեր թողու. բայց նա ժամիկ չընելով յառաջ անցած և Սակօլօի մէջ մի հին բերդի վրայ ռուսական առեւտրական դրօշակը պարզելով ինքզինք տէր հրատարակած էր այդ երկրի։ Ֆրանսական կառավարութիւնը դիմած էր ռուս կառավարութեան որ յայտարարած էր թէ իր համաձայնութեամբ չէ որ կը գործէ Աչինոֆ։ Ֆրանսական կառավարութիւնը տեսնելով որ Աչինոֆ իրեն չուզեր հնազանդիլ իւր հողի վրայ, բռնի միջոցների դիմեց որով 5 ռուս մեռան կռուին մէջ, 4 վիրաւորուեցան և այս կերպով վերջացաւ Աչինոֆի արշաւանքը։ Ռուս կառավարութեան կողմէն ծովային մի սպայ ղրկուեր է Մուէզ, Աչինոֆի կողակիները այնտեղէ Օտէսա վերադարձնելու համար։

—Պր. Շօրսօն տը Քուրսէլ հրաժարած է արտաքին գործերի նախարարութենէն և իրեն յաջորդած է Պ. Սբիւլլէր։ Պ. Սբիւլլէր այն պայմանով ընդունած է այդ պաշտօն որ Թոյլատուութիւն լինի Օմալի դուքսին որ արտաքսուած է Ֆրանսայէն, իւր հայրենիք վերադառնալու։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Նախորդ թուով գրած էինք որ Մուշի մէջ սով ծագած է։ Կ. Պոլսի թերթերն կը գրեն թէ Բ. Դուռը յանձնարարեր է Բաղէշի կուսակալութեան որ 200,000 ղրուշ (40,000 ֆրգ.) բաժնուի Մուշի և շրջակայների կարօտ հողագործներին, պայմանով որ առաջիկայ հունձի ժամանակ յետ առնուի իրենցմէ այդ փոխատրուած գումարն։

—Էրզրումի նորընտիր նահանգապետ Սամիհ փաշան Կ. Պոլսէն ճանապայ եղած է Էրզրում երթալու համար։ Սամիհ փաշա ծանօթ է արդէն իւր հայատեաց բնաւորութեամբ։

—Պուլկարների ռուսական կուսակցութեան պետ Պ. Զանքով օգուտ քաղելով վերջերս հրատարակուած ընդհանուր ներողութենէն, Պուլգարիա կը վերադառնայ մի խումբ պուլղարների հետ որոնք քաղաքական յանցանքներով փախած և Ռուսիա ապաստանած էին։ Պր. Զանքով Պետերբուրգէն մեկնելէ յառաջ, Զարին առանձին ունկնդրութեան արժանացեր է։

—Եգիպտական կառավարութիւնը մի շրջաբերական ղրկելով խնդրած է մեծ պետութիւններէն մի մասնաժողով կազմել յատուկ գործակալներ ղրկելու համար որի պաշտօնն լինի ուսումնասիրել բարեկարգութեան գաղտարանների իրաւասութիւնն ընդարձակելու ծրագիրը։

—Պէրլինի իրաւագիտաներէն Պրոֆեսոր Լիստ որին յանձնուած էր կազմել Բ. Դրան և Պարսն Հիրչի մէջ եղած հաշուական վէճը, խնդիրը երկար ժամանակէ ի վեր ուսումնասիրելէ յետոյ փետրվար 25ին իւր վճիռ հաղորդեր է երկու կողմնակայացուցիչներին որոնք նոյն միջոցին կը գտնուէին Պէրլինի Օսմանեան հիւպատոսարանը։ Կըսուի թէ վճռուած է որ Պարսն Հիրչ 25 միլիոն ֆրանգէ չափ վճարէ Օսմանեան կառավարութեան որ 30 միլիոն կը պահանջէր, մինչդեռ Պարսն Հիրչ ալ 20 միլիոնէն աւելի չէր ուզեր տալ։

—Բողնանէն (բրուսական Բոլոնիա) կը հեռագրեն թէ բրուսահպատակ Բոլոնիացիները փետրվար 25ին մի մեծ ժողով գումարեր են ուր ներկայ գտնուեր են 2000 Բոլոնիացիներ։ Բոլոնիայի մի քանի երեսփոխանները և քահանայներ ճառախօսեր են որ մէկ յետոյ ժողովը քուէարկեր է հետեւեալ որոշումը.

«Բրուսական կառավարութիւնը հալածելով բոլոններէն լեզուն այն նահանգներէ որ երբեմն Բոլոնիայի կը վերաբերէին, յայտնապէս ոտնակոխ արած կը լինի այն խոստումներ որ Բրուսիայի թագաւորն արաւ երբ իրը վեհապետ տիրեց բոլոնական երկրին, ժողովը կերդմընդունէ իւր բոլոնիացի հայրենակիցներ որ այսպիսի նեղ ժամանակների մէջ չթողուն հեռանան իրենց հայրենիքէ, թէև բրուսական կառավարութիւնը կը ճնշէ կը հարբուսահարէ ղերենք որ ստիպուին հայրենիքը թողուլ և գաղթել։»

Ժողովին նախագահը այնտեղ գտնուող Բոլոնիացիների կողմէն խոստին յարգանքի յայտարարութիւնգր ըրած է հայրենասէր Լէտոքովսքի կարգինալին համար, մինչդեռ Բոզնանի այժմեան արքեպիսկոպոս Տերոֆինսկիի անունն անգամ ոչ ոք չէ ուզած բերանն առնել։

—Պուքրեշէն կը հեռաբերեն որ խորհրդարանը որոշեր է դատաստանի ենթարկել Պրաթեանօի նախարարութիւնը որ ստիպուեցաւ հրաժարիլ անցած տարի։ Քննիչ յանձնաժողովը կը բաղկանայ 7 անդամներէ որոց 3ը հակառակ էին այդ նախարարութեան։

—Կ. Պոլսէն կիմացուննեն որ թիւրքական ստիկանութիւնը լրտեսների միջոցով իմանալով գրաւեր է մէկ մտաւկարգելուած զէնքեր այն միջոցին որ Լոյտ ընկերութեան չոգենաւը կը տարուէին Տրապիզոն ղրկուելու համար։

—Սերպիա Միլան թագաւորին դէմ մի նոր դաւադրութիւն երեւան եկած է, Ռումանական ստիկանութիւնը Պուքրեշի մէջ ձեռք անցուցեր է այդ դաւադրութեան վերաբերեալ թղթակցութիւններ որ կընէին Սերպիան արմատականներն։

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ

ՄԷԿ ՆՈՐ ԳՈՐԾԸ

Վենետկի Մխիթարեան Պատ. Մի-
բանութեան տպարանէն այս օրերս ե-
լած մի չքնաղաբերական նամակի մէջ կը
կարդանք հետեւեալ ուրախառիթ
լուրը.

«Բաւական ժամանակէ ի վեր յըն-
թացս տպագրութեան կը գտնուի
Մեծարգոյ Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան
վարդապետին ծանրակշիռ երկասի-
րութիւնն մեր ԱՅՐԱՐԱՏ ԱՇԽԱՐՀԻ
վրայ, որ կը հրատարակուի մի և նոյն
դիրքով և առաւելագոյն ճոխու-
թեամբ պատկերաց, գունաւոր ման-
րանկարուք, աշխարհացոյց եւ տե-
ղագրական քարտիսօք, գնկագիծ և
լուսատիպ նկարուք, և այլն, յառաջ
քան զամս ինչ հրատարակեալն ՍԻՄ-
ՄԻԱՆ:

«Նպատակաւ տպագրական մեծա-
գումար ծախուց օգնելու, մեծապէս
վստահ ենք որ բանասէր և աղգա-
սէր անձինք՝ յօժարամիտ պիտի փու-
թան բաժանորդագրիլ այսպիսի չքեղ
հրատարակութեան մէ, որ ազգային
մասնագրական-պատմական–աշխար-
հագրական անգին օգտին հետ՝ կը
բովանդակէ յինքեան նաև մեծարգոյ
Հայրենասէր Հեղինակին քառասնա-
մեայ և աւելի տարիներու անընդ-
հատ ճգանց և ուսանց երկունքը:

«Բովանդակ գործն պիտի բազկա-
նայ մերձաւորապէս 75–80 քառածալ
մեծադիր փառաւոր տպագրուած
մեծերէն:

«Տպագրութիւնն աւարտելէ վերջ
կը կազմուի առ իւրաքանչիւր
բաժանորդս պատկանեալ օրինակ-
ներն:

«Բաժանորդագրութիւնն կանխիկ
վճարմամբ միայն ընդունելի կը լինի:
–Բաժանորդագնոյն ստացման համար
ի Տպագրատանէս անդորրագիր կու-
զարկուի առ բաժանորդս:

«Ով որ բարեհաճի բաժանորդ գըր-
ուիլ մինչև ցվերջ Յունիսի 1889 տար-
ւոյս, կը վճարէ միայն 50 ֆռանկ:
–Յունիս 30 թուականէն վերջը բա-
ժանորդագրութիւն այլ եւս ընդու-
նելի չի լինիր:

«Տպագրութիւնն աւարտելէ յե-
տոյ՝ մնացեալ սակաւաթիւ օրինակ-
ներն (եթէ յաւելուն, վասն զի որ-
պագրութեան ստմմանեալ օրինակք
չեն բազմանիլ) պիտի վաճառուին
իւրաքանչիւրն 100 ֆռանկով:

«Բաժանորդագրութեան կեդրոնա-
տեղին է

Ի ՎԵՆԵՏԻԿ, Մխիթարեան Տպրն:
VENISE, Imprimerie Arménienne

«Վերոյիշեալ բաժանորդագնոյ մէջ
ամփոփեալ է նաև ճանապարհի ծախ-
քըն, զոր Տպագրութիւնս իւր վրայ
կրստանձնէ:»

Արմենիայի խմբագրութիւնը ուրա-
խութեամբ հրատարակելով այս լուր,
կը յայտարարէ նաև որ բաժանորդ
գրուիլ ուզողների դիւրութեանն հա-
մար պատրաստ է ինք եւս ընդունիլ
բաժնորդագրութիւններ:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ դիրքերն կարելի է
ստանալ Արմենիայի խմբագրատունէն,
իրենց առջեւ նշանակուած գիներով
և փոստի ծախքը խմբագրատունէն
վճարուելով:

Արժէքը կանխիկ չվճարուած՝ դիրք
չղրկուիր:

ՍԻՄՄԻԱՆ կամ Համապատում հայ-
կական կիլիկիոյ. Հ. Ղեւոնդ Ալիշա-
նի այս հրաշակերտ՝ ոչ միայն ամե-
նամեծ պատիւ կը բերէ բազմամը-
մուտ հեղինակի հայրենագիտութեան
և հայրենասիրական ղգացմանն, այլ
և մեծ պարծանք է ամրողջ հայու-
թեան համար որի փառաւոր յիշա-
տակներն աւերակներուն մէջէն և դա-
րաւոր փոշիների տակէն դուրս բերել
յաջողած է: Կիլիկիան, մեր վերջին
թագաւորութեան օրրանն ու գերեզ-
մանը, ներկայացուած է այս գրքի
մէջ իւր ամեն մանրամասնութիւննե-
րով: Ընթերցողը կը գտնէ այնտեղ
պատմական, աշխարհագրական, տե-
ղագրական, բնախօսական և՛ն. և՛ն.
հին ու նոր տեղեկութիւնները, հայ
թագաւորների հրովարտակները, իշխա-
նավարական, դատավարական և՛ն. հե-
տաքրքրաշարժ ծանօթութիւնները ո-
րոնք Ալիշանի պէս բազմահմուտ մի
անձի ուսումնասիրութեան և խու-
զարկութեանների արդիւնքն եղած
են: Հայ գրականութեան մէջ երեւ-
ցած այդ հրաշակերտ՝ որ հայրենա-
նուէր վարդապետին Հ. Ղեւոնդ Ալի-
շանի ճարտար և անխոնջ ձեռքովը
կանգնած է յոյժ տալու համար մեր
Կիլիկեան թագաւորութեան փառքն
ու պարծանքը, արժան է որ զար-
դարէ ամեն մէկ Հայի գրադարանը
պի ամեն Հայ իրաւունք ունի պարծե-
նալու անով:

Գրքին սկիզբը կայ Վեր. հեղինա-
կին պատկերը: Ամբողջ գործը՝ բայի
մի ընդարձակ ներածութիւնէ, կը
պարունակէ 592 երկիզեան երեսներ:
Տպագրուած է ընտիր տեսակ թղթի
վրայ և ունի 235 գեղեցկագիծ պատ-
կերներ որոնք կը ներկայացունեն Կի-
լիկիոյ գեղեցկագոյն տեսարանները:
Ունի նաև Կիլիկիոյ աշխարհագրա-
կան նրբագիծ մէկ քարտէզը:

ՍԻՄՄԻԱՆի առաջնակարգ տեսա-
կը (լաւագոյն թղթի վրայ տպագ-
րուած և 15ի չափ գունաւոր պատ-
կերներով և պարզեւագիրներով (55
ֆրանգ:

Նոյնը Բ. կարգի (առանց գունա-
ւոր պատկերների) 40 ֆրդ.

Նոյնն ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆը (Այս
վերջին տեսակ որ 1885 թ. «Բազմա-
վէպ»ի իրը վերջին եռամսեայ պրակն
հրատարակուած է, աշխարհաբար
լեզուով քազուածները կը ներկայաց-
նէ ՍԻՄՄԻԱՆԷն որ գրուած է գրա-
բար լեզուով–թէ և ոչ խրթին և ան-
հասկանալի ոճով — և ծանօթա-
թիւններ կուտայ Սիսուանի պարու-
նակութիւններին վրայ այնպէս որ
գայն չունեցողին ցանկութիւնը կը
դրգռէ ունենալու համար և ունեցո-
ղին ալ մի լաւ առաջնորդ կը լինի
այդ ընդարձակ աշխատութեան մէջ
դիտող աչքով չըկլլու և հետաքրո-
քրութեամբ հետաղօտելու համար: 3 ֆր. 50 սնթ.

—ԲԱՖՖԻ—ԿԱՑԾԵՐ Ա. եւ Բ. հատորներ.

Ազգային առաջնակարգ վիպագիրը
Պր. Բաֆֆիի այս գիրքը կը ծանօ-
թացունէ ընթերցողը տաճկական և
պարսկական Հայաստանի գլխաւոր
տեղերին հետ, հետաքրքրաշարժ տե-
ղեկութիւններ կուտայ քուրդերի պա-
նաղան ցեղերի և հայերի դրութեան,
վարքի և բարքի մասին: Նա ցոյց կը
տայ այն ծրագիրը որին պէտք է հե-
տեւին Հայաստանի մէջ գործել ու-
զողները: Մի խօսքով, թէ՛ իրը ազ-
գային ընտիր վիպասանութիւն և թէ՛
իրը հայրենասիրական գործունէու-
թեան վարդապետական և ծրագիր,
արժան է որ գտնուի այս գիրքը ա-
մեն հայրենասէր Հայի տուն:

Գինն Ա հատորին (կազմած) 8 ֆր.
և 50 սանթիմ. Բ հատորին (թղթա-
կազմ) 8 ֆրանգ և 50 սանթիմ:

—Գ. Աբովեանց—ՀՕՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒ-
ԹԻՒՆը. (Ամեն Հայի համար անհրա-
ժեշտ պարտք է իմանալ իւր ազգի
պատմութիւնը, գիտնալ թէ ինչպէս
սկսեր է իւր ազգ, ո՛ր տեղ ունեցեր
է իւր հայրենիք, ի՛նչպէս եկեր հա-
սեր է մեր օրերը, ո՛րանք եղած են
իւր երջանկութեան և իւր թշուա-
ռութեան պատճառները և՛ն.: Դէպրդ
Աբովեանց որ Տփղիսի Ներսիսեան
վարժարանին մէջ Հայոց պատմութեան
ուսուցիչ էր, գրած է այս «Համա-
ռօտութիւն Հայոց ազգի պատմու-
թեան»ը որ մինչև այժմ երբորդ տպա-
գրութեան արժանացած է:) 2 ֆր.

—ԿԻՒԼՁԱՐի.— Եւրոպաի զանազան
կողմերն և այլ տեղեր գրուած հայ
գաղթականութիւններին մէջ գժբաղ-
դաբար չատեր կան մեր հայրե-
նակիցներէ որոնք թուրքերէն խօսիլ
գիտեն բայց հայերէն լեզուն չեն
հասկնար որ կարգան իրենց ազգային
լեզուով գրուած «Հայոց պատմու-
թիւն»ներն: Այդպիսիներին կը ներ-
կայացունենք ահա ԿԻՒԼՁԱՐԻՆ որ
Զամչեան Հ. Միքայէլ վարդապետի
գրած եռահատոր ընդարձակ Հայոց
պատմութենէն քաղելով մէկ հատորի
մէջ ամփոփուած և հայերէն տառե-
րով ու թրքերէն լեզուով գրուած,
կը ներկայացունէ մեր Հայ ազգի
պատմութիւնը:

Գինն է 5 ֆր. և 60 սանթիմ,
փոստի ծախքը վճարուելով Արմենիայի
խմբագրատունէն. իսկ Մարսէյլի մէջ
դնողներին համար 5 ֆրանգ:

—Գամառ Քաթիպա.— ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. (Ազգային առաջնակարգ
բանաստեղծ Ռ. Պատկանեանցի ազա-
տաշունչ և հրահանգիչ բանաստեղ-
ծութիւններն կը պարունակէ. սկիզբն
գրուած է հեղինակին պատկերը):
2 ֆրդ:

—Գամառ Քաթիպա— ԱԶԱՏ ԵՐԳԵՐ.
(Գամառ Քաթիպայի «Բանաստեղծու-
թիւններ»էն Ազատ Երգերի մասը ա-
ռանձին տետրակով տպագրուած)
20 սթմ.

—ԸՆՏԻՐ ՀԱՑԱԶՈՒՆՔ. Մեր ազ-
գային պատմութեան մէջ անուանի
եղողներէ 13 անձի լուսանկար պատ-
կերները կը պարունակէ այդ քարտի
մեծութեամբ (format carte de visite),
անոնց ամեն մէկին վրայ ալ 5էն 11
երեսի չափ պատմական տեղեկու-
թիւններով: Այդ 13 անձեր են՝ Հայկ,
Տիգրան Բ, Արտաշէս Բ, Սահակ Պարթեւ,
Աշխէն Տիկին Հայոց, Խոսրովիդուխտ,
Մեծն Վարդան Մամիկոնեան, Ներ-
սէհ Կամսարական, Գայլ Վահան Մա-
միկոնեան, Լեւոն Ա Ռուբինեան թա-
գաւոր Հայոց, Մովսէս Խորենացի,
Անանիա Շիրակացի և Ներսէս Լամբ-
րոնացի: Գինն 8 ֆր.

—ԱԶԳԱՍԻՐ (Վենետկի Մխիթա-
րեան Պատ. Միաբանութեան հրատա-
րակած այս գիրքը որ 226 երեսներէ
բաղկացած է, կը բացատրէ թէ ինչո՞ւ
համար և ի՞նչպէս պէտք է որ մարդ
սիրէ իւր ազգ և հայրենիք և ցոյց
կուտայ թէ ի՛նչ բարոյական պահա-
պանութիւններ կը տիրեն մեր ազգի մէջ.
թէ՛ օտար ազգերի և թէ՛ մեր ազգի
պատմութենէն ազգասէր անձերի օ-
րինակներ բերելով, անոնց կենսագ-
րութիւններ կը ներկայացունէ ըն-
թերցողին: Լեզուն Կ. Պոլսի հին աշ-
խարհաբառի ոճն ունի և տեղ տեղ
մի քանի բառերի թուրքերէնն եւս
նշանակուած է փակագծի մէջ, ա-
նանկներին ալ դիւրահասկանալի լի-
նելու համար): 2 ֆր. 70 սնթ.

—ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆի (Հայր
Մանուէլ Քաջունիի գրած հնախօսու-
թիւնն է, 300 երեսներէ բաղկացած,
որի մէջ համառօտիւ տեղեկութիւն-
ներ տրուած են Հայաստանի քաղա-
քական հին կառավարութեան ձեւե-
րին, նախարարական և պետրորական
բաժանումներին, պատերազմական
գործիքներին, նախարարական և ժո-
ղովրդական կոչումներին, տղայոն
սովորութիւններին, օրէնքներին, դը-
րամներին վրայ և՛ն.) 3 ֆր.

—Aux Bords de l'Arax, mazurka pour piano, prix 2 fr. 50.

ԹՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Բաժնորդագրութիւններն կսկսին
ամեն ամսի մէկէն կամ 16էն և կան-
խիկ կը վճարուին: Քանի ամսի հա-
մար որ ուզուի, կարելի է բաժնորդ
գրուիլ, միայն թէ բաժնորդագրու-
թիւններն կրնան ընդունուիլ մինչեւ
Դ տարեշրջանի վերջին ամիսն միայն,
այսինքն ՄԻՆՉԵՒ 1889 ՅՈՒԼԻՍ ԱՄ-
ՍԻ ՎԵՐՋ և Ո՛Չ ԱՒԵԼԻ ՏԵՒՈՂՈՒ-
ԹԵԱՄԲ: Այնուհետեւ, եթէ յաջո-
ղինք, մտադիր ենք նոր կարգագ-
րութիւններ անել, աւելի լաւ պիրքի
մէջ դնելու համար Արմենիան:

—Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան
ալ կընդունի ծանուցումներ հրատարա-
կելու համար. անոնք որ պէտք կունե-
նան Արմենիայի միջոցով մեկին դիմումն ա-
նել կամ մի բան յայտարարել, պատրաստ
ենք ընդունիլ իրենց ծանուցումներ ըստ
լրագրական սովորութեան: Ծանուցում-
ների գիներն նշանակուած են Արմենիայի
ճակատը, տառի վրայ հաշուելով. 1 եր-
կաթագրի (դվաթիր) համար 2 սանթիմ
և 1 բոլորգրի համար 1 սանթիմ: 3 ան-
գամ դրուելիք ծանուցումի գնին վրայ
0/0ին 10 զեղչ կը լինի: 10 և աւելի ան-
գամներ դրուելիք ծանուցումի գնին վը-
րայ 0/0ին 30 զեղչ: Սակարկութիւն չըն-
դունուիր:

ՏՆՕՐԷՆ—ԹՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.